

ՕՏԱՐ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

(մասն Գ. – ֆրանսերէն)¹

ԱՐՄԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ (armen_michaelian@yahoo.com)

ՆԱԽԱԲԱՆ

Այս յօդուածով շարունակում ենք օտար յատուկ անունների տառադարձութեան կանոնները լուսաբանող յօդուածաշարքը, որը սկսել ենք մերձատրարելեան լեզուներից եւ որի երկրորդ մասը նուիրել ենք հին յունարէնին ու լատիներէնին²: Յօդուածաշարքի սոյն՝ երրորդ մասը, նուիրում ենք ֆրանսերէնից հայերէնին անցած անունների տառադարձութեանը:

Հայերէնը ֆրանսերէնի հետ շփման մէջ է մտել դեռեւս կիլիկեան շրջանից սկսած: Սակայն, ի տարբերութիւն երկար պատմութիւն ունեցող այլ լեզուների, դժբախտաբար չենք կարող ասել, որ հազար տարուայ ընթացքում հաստատուել է ֆրանսերէն-հայերէն հայկաբան տառադարձութեան որոշակի մի աւանդոյթ: Մի կողմից՝ կիլիկեան հայերէնի եւ յետագայում՝ արեւմտահայ գրական լեզուի արտասանութիւնների ազդեցութիւնը, միւս կողմից՝ նոր ժամանակներում ռուսերէնի ազդեցութիւնը արեւելահայերէնի վրայ, ծնունդ են տուել տարածեւ գրութիւնների, որոնք հայերէնը առ այսօր չի կարողանում միաւորել: Այսօր հազիւ թէ գտնենք ֆրանսերէն մի անուն, որ իր հաստատուն ու միակերպ տառադարձումն ունենայ մեր լեզուում: Նոյնիսկ այդ երկրի (Ֆրանսիա/Ֆրանսա) եւ նրա մայրաքաղաքի (Փարիզ/Քարիզ/Պարիզ/Պարիժ/Փարէզ...) անունները տարգրութիւնների տեղիք են տուել, թող թէ Պասկալ/Փասգալ, Հիւգո/Հիւկօ, Վերսալ/Վերսայլ եւ այլ հարիւրաւոր կրկնակներ:

Յօդուածները չճանրաբեռնելու եւ միեւնոյն բանը միքանի անգամ չկրկնելու համար՝ յօդուածների նախաբաններն ու ամփոփումները այսուհետեւ լինելու են հակիրճ: Այնուամենայնիւ, մեր ձեռնարկութեան տեսական գաղափարներին ծանօթանալու համար, ընթերցողին հրաւիրում ենք աչքի անցկացնել նախորդ յօդուածների նախաբանները, տեսական մասերն ու ամփոփումները:

¹ Ելլելով օդուածին տրամաբանութենէն եւ ուղղագրական առաջարկներէն, յօդուածին ուղղագրութիւնը բացառաբար կը պահենք հեղինակային վիճակով:

² Արմէն Միքայէլեան, «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Ա. - մերձատրարելեան լեզուներ)», *Հայկազեան հայագիտական հանդէս, հրդ. Խ.*, Պէյրութ, 2020, էջ 341-64: Նոյն հեղինակի, «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Բ. - հին յունարէն եւ լատիներէն)», *Բազմալէպ, ՃՀԸ*. տարի, Վենետիկ, 2020, 304-336:

«ՖՐԱՆՍԱ» ԱՐՄԱՏԸ ԵՒ ՆՐԱՆԻՑ ԿԱԶՄԱԾ ԲԱՌԵՐԻ
ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Սկզբից եւեթ ցանկանում ենք ճշտել «Ֆրանս» արմատից կազմած հայերէն բառերի ձեւերը: Եթէ «Ֆրանս» ցեղանունն ձեւը ընդհանուր է մեր երկրքին ճիւղերի համար³, նրանից կազմած ածանցեալները թեթեւակի տարբերութիւն ունեն արեւմտահայերէնում եւ արեւելահայերէնում. արեւմտահայերէն՝ Ֆրանսա, ֆրանսացի, ֆրանսական, ֆրանսերէն, եւ արեւելահայերէն՝ Ֆրանսիա, ֆրանսիացի, ֆրանսիական, ֆրանսերէն:

Որպէս միացեալ հայերէն ձեւեր՝ մենք ընտրում ենք Ֆրանսիա, ֆրանսացի, ֆրանսական ձեւերը, ինչպէս եւ աւանդուած ունենք Ստեփանոս Մալխասեանցի բառարանում⁴:

Կարող է թուալ, թէ «Ֆրանսա» ձեւը անելի հարազատ է ֆրանսերէն FRANCE ձեւին (եւ մենք անձամբ մինչեւ հիմա անգիտակցաբար առաւելութիւն ենք տուել հենց դրան): Սակայն գիտական եւ անաչառ մօտեցումը յուշում է, որ «ա» վերջաւորութեամբ երկրանունները (Հոլ(լ)անտա, Իրլանտա...) հարազատ չեն դասական հայերէնին, եւ հնարաւոր է, որ միջերկրածովեան որոշ լեզուների ազդեցութեամբ ի յայտ եկած լինեն (França, Fransa): Ի հակառակէն՝ «-իա»ն երկրանուն կերտող, յունարէնից փոխ առած վերջաւորութիւն է: Միեւնոյն ժամանակ՝ «ի» տառը հայերէն «-ացի» կամ «-ական» ածանցների մաս չէ: Ուստի՝ Իտալիա, իտալացի, իտալական, Գերմանիա, գերմանացի, գերմանական, Հունգարիա, հունգարացի, հունգարական, Աւստրալիա, աւստրալացի, աւստրալական, Ճապոն(իա), ճապոնացի, ճապոնական, Կոլումբիա, կոլումբացի, կոլումբական: Ունենք, ինչ խօսք, եւ «իա» ձեւերով օրինակներ, Անգլիա, անգլիացի, անգլիական (սակայն անգլերէն), Աւստրիա, աւստրիացի, աւստրիական, Դանիա, դանիացի, դանիական: Եթէ համարենք, որ «-իա» վերջաւորութիւնը կանոնական է, պէտք է զուգահեռաբար ընդունենք, որ «ացի» եւ «ական» վերջածանցները ցանկալի է գրել առանց յաւելեալ «ի» ձայնատրի, ինչպէս եւ գրում ենք «Ֆրանսախօս, ֆրանսաբնակ, ֆրանսահպատակ, ֆրանսագէտ, ֆրանսասէր»:

Արեւմտահայերէնը եւ արեւելահայերէնը մերձեցնելու եւ միացեալ հայերէն ձեւերը ճշտելու մտահոգութեամբ, առաջարկում ենք նկատի առնել նշած հանգամանքը ոչ միայն ֆրանսերէնի, այլեւ աշխարհագրական ուրիշ նոր անուններ որդեգրելու դէպքերում:

³ Դասական հայերէնը եւ արեւմտահայերէնը երկիրը «Գաղղիա» էին կոչում մինչեւ վերջին դարը:

⁴ Ստեփանոս Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, Հայկական ՍՍՌ պետական հրատ., Երեւան 1944–45:

ՖՐԱՆՍԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Լատիներենից սերած ֆրանսերենի պարագայում հարց է, թե որ դարաշրջանից Գաղղիայի (Գալլիայի) լեզուն պետք է համարել ֆրանսերենը: Հռոմեացի նուաճողների լեզուն լատիներենն էր, այնուհետև այն վերաճեց ռամիկ (ժողովրդական) կոչումով լատիներենի, ևեյլի ու զ մասնատուեց ռոմանական բարբառների երկու տասնեակից ևեյլի մի լեզուահոյլի: Ի սկզբանե՝ ֆրանսերեն կոչումը միայն Լուտետիայի (Փարիզի) ու շրջակայքի խօսակցական լեզուն էր: Այն պաշտօնական ու դատական գրագրության միակ լեզուն հաստատուեց 1539 թուականին, սակայն դրանից յետոյ էլ լատիներենը դեռևս երկար ժամանակ ֆրանսերենին զուգահեռ գործում էր տարբեր հաստատուություններում: Գրական ֆրանսերենը (Փարիզի եւ արքունիքի լեզուն) բարբառներին վերջնականապես յաղթեց ու ամենուր տիրապետող դարձավ միայն ԺԹ. դարի վերջից ու Ի. դարի սկզբից: Ասել է թե՛ ամեն յատուկ անուն չէ որ «ֆրանսերեն» է եղել. մեկը գասկոներեն էր, միւսը՝ նորմանդերեն, երրորդը՝ բուրգունդերեն...

Խառնաշփոթից խուսափելու համար թարգմանիչը պետք է ուշադիր լինի. հնարատր է, որ պատմական այս կամ այն անունը լատիներենից պետք լինի տառադարձել (օրինակ, արքաների անունները՝ Լուդովիկոս, եւ ոչ թե Լուի), կամ նոյնիսկ ռոմանական այս կամ այն լեզուից:

ՖՐԱՆՍԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Ֆրանսերենը մեծ ազդեցություն է թողել Եւրոպայի եւ ընդհանրապէս աշխարհի բազմաթիւ լեզուների վրայ, եւ ֆրանսերենի աշխարհագրական շրջանակը բաական ընդարձակ է: Դա ոչ միայն ֆրանսալեզու Ֆրանսիան, Բելգիան, Շուիցերիան⁵ ու Կանադան են, այլեւ Ամերիկայի, Ափրիկէի ու Ասիայի բազմաթիւ երկրներ, որոնց պաշտօնական լեզուն ֆրանսերենն է (կամ եղել է), եւ որոնց աշխարհագրական անունները յաճախ ֆրանսացիներն են մեզ ասանդել: Ինչպէս յօդաձաշարքիս առաջին մասում ենք նշել, հայ լեզուաբանութիւնը հնարատրութիւն չունի ուսումնասիրելու աշխարհի հազարատր մանր մունր լեզուներ, եւ մենք ստիպուած ենք որոշելու, թէ այդպիսի լեզուների դէպքում տառադարձութեան ինչ միջնորդ լեզու ենք ընտրում: Ֆրանսերենը կարեւորագոյն միջնորդ լեզուներից մէկն է:

Ամերիկայի Միացեալ Նահանգների յայտնի քաղաք Չիքագոի անունը հնդկացիական լեզուներից ֆրանսացիներն են գրի առել, եւ անուան առաջին հնչիւնը [շ] է, ուստի պետք է տառադարձենք Շիկագո (ինչպէս եւ արտասանում են իրենք՝ ամերիկացիները անգլերէն): Խորհրդային շրջա-

⁵ Շուիցերիա ձեւը միացեալ հայերէն է՝ արեւմտահայերէն Ջուիցերիա եւ Հայաստանի խորհրդային շրջանից ժառանգած Շվեյցարիա անյաջող ձեւերի ստուգաբանօրէն ճշմարիտ տարրերից սրբագրած: Այս տեղանունն մասին ևեյլի մանրամասն խօսելու ենք գերմաներէնին նուիրում յօդուածում:

նում Հայաստանում հաստատուած արեւելահայերէնը ռուսերէնից ընդօրինակեց սխալ արտասանութիւն ու տառադարձութիւն՝ Չիկագո: Ֆրանսացիներն են, որ առաջինը հետազօտել են Հիսիսային Ամերիկայի մի զգալի մասը (Մեծ Լճերից մինչեւ Միսիսիպիի գետաբերանը ընկած հսկայական տարածքները), եւ այսօր էլ ԱՄՆի այդ շրջաններում հանդիպում ենք ֆրանսերէնով տառադարձած բազմաթիւ անունների. Միշիգան, Միսուրի, Պիեր (Պիէր), Դէ Մուան, Սեն (Սէն) Լուի, Լուիզիան(ա), Բատոն Ռուժ, Նոր Որլէան (Օրլէան)...

ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ՀՆՁՈՅԹՆԵՐՆ ՈՒ ՀՆՁԻՒՆՆԵՐԸ

Ֆրանսերէնի պարագայում, ուր բառերի գրութիւնը բաւական վատ է յարմարեցրած բանաւոր հնչողութեանը, տառադարձելիս անելի տրամաբանական է իբրեւ ելակէտ ընդունել հնչողութիւնը, այն բնականաբար հնարաւորինս ճշտելով անուան գրութեամբ ու ստուգաբանութեամբ:

Ստորեւ բերում ենք *Հնչիւնաբանութեան Միջազգային Ընկերութեան* (API⁶) այբուբենի նշանագրերը, որոնք կիրարկում են ֆրանսերէնի հնչոյթները արտայայտելու համար: Հնչոյթի կամ հնչիւնի⁷ նշանը ընդունուած է դնել անկիւնաւոր փակագծերի մէջ⁸: Ստորեւ՝ օրինակների մէջ, ընդգծել ենք տուեալ հնչոյթը արտայայտող տառերը:

Ձայնաւորներ. [a] **patte**, [ɑ] **pâte**, [ã] **gant**, [e] **blé**, [ɛ] **lait**, [ɛ̃] **pain**, [i] **vie**, [o] **mot**, [ɔ] **corps**, [ɔ̃] **long**, [y] **mur**, [u] **tout**, [ø] **deux**, [œ] **peur**, [ə] **le**, [œ̃] **un**:

Կիսաձայններ. [j] **yaourt**, [w] **oui**, [ɥ] **huit**:

Բաղաձայններ. [b] **bal**, [p] **porte**, [d] **dent**, [t] **tout**, [g] **gant**, [k] **clé**, [z] **zèbre**, [s] **sang**, [ʒ] **jour**, [ʃ] **chien**, [v] **vie**, [f] **fou**, [l] **long**, [ʀ] **rue**, [m] **mer**, [n] **nous**, [ɲ] **vigne**, [ŋ] **camping** (անգլերէնից փոխ առած բառերում), [h] **hourra** (եզակի բառերում է հանդիպում):

⁶ Association Phonétique Internationale (յապաւած՝ API), *Հնչիւնաբանութեան Միջազգային Ընկերութիւն*, որի հնչական «այբուբենով» է ընդունուած գրի առնել զանազան լեզուների հնչոյթները:

⁷ «Հնչոյթ» եւ «հնչիւն» եզրոյթների տարբերութիւնը քաջ յայտնի է լեզուաբաններին (Հ. Զ. Պետրոսեան, Ս. Ա. Գալստեան, Թ. Ա. Ղարազիլեան, *Լեզուաբանական բառարան*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975):

⁸ Իսկ տառ արտայայտելու համար նշանագիրը դնում ենք չակերտների մէջ. «ա», «բ», «գ» եւն.:

ԿԻԼԻԿԵԱՆ «ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ» ԵՒ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ
ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԱՌԱՆԴՈՅԹԸ

Մեսրոպեան ուղղագրության վրայ՝ Կիլիկեան Հայ Թագաւորութեան դարաշրջանում աւելացաւ մի նոր ուղղագրութիւն⁹: Հայերէն հնչիւնների մի մասի հնչողութիւնը այդ դարերում Կիլիկիայի ու նրա յարակից տարածքներում այլ էր, քան միջնաշխարհի ոսկեդարեան հնչողութիւնը, եւ Կիլիկեան մատենագիրները զանազան յաւելումներ կատարեցին արդէն գոյութիւն ունեցող մեսրոպեան ուղղագրութեան վրայ: Մի կողմից՝ դա բաղաձայնների յայտնի տեղաշարժն էր, միւս կողմից՝ զանազան ձայնաւոր հնչիւնների փոփոխութիւնները¹⁰:

Բաղաձայնների տեղաշարժը քաջ յայտնի է լեզուաբանների շրջանում: Ոսկեդարեան եռաստիճան համակարգը տեղի տուեց երկու այլ համակարգերի, մէկը՝ եռաստիճան, միւրը՝ երկաստիճան¹¹: Այդ երկուսից, մի քանի դար յետոյ, գլխաւորապէս Կոստանդնուպոլսի հայերէն բարբառի ազդեցութեան տակ, արեւմտահայ գրական լեզուն պահեց երկաստիճան «խլազուրկ» համակարգը:

Հայերէն բնիկ բառերը մեծ մասամբ պահեցին իրենց մեսրոպեան ուղղագրութիւնը, սակայն Կիլիկեան այս նոր գրելաձեւը դարձաւ օտար (արեւմտաւերոպական, արաբական եւ տաճկական) անունները տառադարձելու միջոց: Առաջ եկաւ կարծես թէ երկու համակարգ միեւնոյն գրուածքի մէջ: Ստորեւ ներկայացնում ենք Կիլիկեան գրակարգի գլխաւոր գծերը:

Պայթական եւ պայթաշփական բաղաձայնները այսօր առաւելապէս երկաստիճան են եւ հայերէնի արեւմտագոյն բարբառների¹² պատմական արտասանութեան հետեւանք:

API	[b]	[p]	[d]	[t]	[g]	[k]	[dʒ]	[tʃ]
հայերէն	պ	փ/բ	տ	թ/դ	կ	ք/զ	ճ	ջ/ջ

Օրինակներ (հին ֆրանսերէնից)¹³. Isabelle **Չապէլ**, **passage** **բասաճ**, **bail** **պայլ**, **double** **տուպլ**, **temple** **դամփլ**, **Guillotin** **Կիոդին**, **quite** **քիթ**, **comte** **գունդ** (**գունթ**), **Josselin** **Ճօսլին**, **Charles** **Ջառլ**, **prince** **բրինձ**: Այսօր՝ **Hugo** **Հիւկօ**, **Besançon** **Պըզանսօն**, **Shōn** **Ժիօն**, **Saint-Cloud** **Սէն Քլու**, **Corneille** **Գօնէլլ** են:

⁹ Կիլիկեան հայերէնի եւ մասնաւորապէս ուղղագրութեան վերաբերեալ տե՛ս՝ Josef Karst, *Historische Grammatik des Kilikisch-Armenischen*, Verlag von Karl J. Trübner, Strassburg 1901:

¹⁰ Փոփոխութիւնները առնչուեցին նախ եւ առաջ տառադարձութեանը:

¹¹ Յակոբ Չոլաքեանը դրանք անուանում է *Կիլիկեան* եւ *խլազուրկ* համակարգեր (Յ. Չոլաքեան, *Աւանդական ուղղագրութիւն (կանոնակարգ եւ խնդիրներ)*, Երեւան, հեղ. հրատ., 2016, էջ 88-89):

¹² Կիլիկիա, Փոքր Հայք, Ծոփք, Աղձնիք, նաեւ, եւ մանաւանդ՝ Կոստանդնուպոլիս:

¹³ Karst, էջ 15 եւ յաջորդները:

Օտար [r] հնչյունը յաճախ ամէնուր գրում է «ր», նոյնիսկ բառասկզբին. Բոպէր, Բիթա, Բօճէր: Օտար [v] հնչյունը ամէնուր գրում է «վ». Ճիվան, Տէրվիշեան, Կէովշէնեան:

Ֆրանսերէն «ցո» ձայնը (տե՛ս ստորեւ) գրում է «յն». champagne շամբայն, Jacques Bénigne Bossuet Պէնիյն Դօսիւ: «Թագ» «Լ» կոչուածը աւանդաբար՝ «յլ». Marseille Մարսէյլ, Versailles Վերսայլ, Corneille Գօնէյլ, այսօր սակայն՝ Argenteuil Արժանթէյ:

Ելնելով շատ բառերի մէջ «ե» ձայնաւոր տառի կիլիկեան [ʔ] կամ [յե] արտասանութիւնից, օտար անունների համար սովորական դարձաւ API [e] հնչյունը ամէնուր «է» գրելը. Fénélon Ֆէնէլօն, նմանապէս՝ Պէրպէրեան, Պէշիկթաշեան, Պէյրութ: Նոյնը եւ «ո»ի պարագայում. շատ բառերում այն հնչում էր [ո] (API [wo]), որը եւ հիմք հանդիսացաւ օտար [օ]երը ամէնուր գրել նորամուտ կլոր «օ» տառով. Victor Hugo Վիգթօր Հիւկօ, նաեւ՝ Ճաբօն, Չօպանեան, Անտօն, Շիքակօ, Կարօ, Մարօ, Ճօ Պայտըն:

Բառամիջի «ը»ն ամէնուր գրում է. Պըզանսօն, Այտընեան, Գաթըրճեան, Հաճըն, Քարթըր, Պօսթըն, Պայտըն:

Ֆրանսերէնի (եւ թուրքերէնի) «ս/ւ» (API [y]) հնչյունի համար յարմարեցրին հայերէնի «իւ» երկբարբառը (որը հայերէն շատ բառերի մէջ այդպէս էլ հնչում է արեւմտահայերէն). La Bruyère Լա Դրիւյէր, Bruxelles Դրիւքսէլ, նմանապէս՝ Իթիւճեան, Իւզգարտաշեան, Սիւրմէլեան, իսկ «eu» (թուրքերէն «ծ») հնչյունի համար յօրինուեց «էօ» երկբարբառը (հայերէնին բոլորովին խորթ). Eugène Էօժէն, Montesquieu Մօնթէսքիէօ, Argenteuil Արժանթէյ, նաեւ՝ Չէօրէքճեան, Գարակէօզեան:

Հայերէն «ե» տառը ձայնաւորից առաջ կիսաձայն [յ] հնչյունի սպասաւորութիւնը ստացաւ՝ «եա, եէ, եի, եօ, եու, եիւ, եէօ, եր». Եաղուպեան, Եազըճեան, Եօղուրթ, Նիւ Եօրք, Եուրի (ռուսերէն «Юрий»ի արդի տառադարձումը), seigneur սէնէէօր, Եըլտըզ:

Օտար [w] հնչյունը արտայայտուեց «ու» տառով, նոյնիսկ բառասկզբին. Ուաշինկթօն, Ուիլիըմ, Ուիքիփետիա, Saint-Ouen Սէնթ Ուէն:

Մենք դէմ ենք այդպիսի տառադարձութեանը: Այն տուրք է տալիս օտար լեզուներին եւ արհամարհում է հայերէնի օրէնքները: Եթէ արդարացնենք օտար, մասնատրապէս՝ ֆրանսերէնի հնչյունները հայերէնում հարազատօրէն արտայայտելու ցանկութիւնը եւ ընդունենք, օրինակ՝ «իւ» եւ «էօ» հնչյունները, ապա դռները բացում ենք նաեւ ռուսահայ եւ բոլոր այլալեզու տառադարձութիւնների առջեւ: Օտար լեզուին տուրք տալու այդպիսի մի օրինակ է ռուսերէն հնչյունները փափկացնելու համար մի ժամանակ խորհրդային շրջանի՝ Հայաստանում հաստատուած արեւելահայերէնում ընդունուած ապաթարցը («փշիկը») (տե՛ս բազմաթիւ օրինակներ Մալխասեանցի բառարանում. «կոլ՝տուրա», «ռեվոլ՝վէր», «պալ՝տօ» են.): Այդպէս,

ամէն օտար լեզուի համար տառեր ու երկբարբառներ յօրինելով, հայերէնը կը վերածենք բաբելոնեան մի աշտարակիկի եւ ոտնակոխ կ'անենք մայրենին ամրապնդելու ու միասնական լեզու շինելու մեր բոլոր ջանքերը:

Այսօր Սփիւռքում հայագիտութիւնը փորձում է ձեռքազատուել մասնատրապէս «է» եւ «օ» ձայնատրոնների կիլիկեան տառադարձումից (դրանք ամէնուր գրելու միտումից), որը պէտք է անշուշտ ողջունել եւ խրախուսել:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՊԱՐԶԵՅՐԱԾ ՌԻՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Սովետական պարզեցրած ուղղագրութիւնը (1922 եւ 1940 թթ. խմբագրութեամբ) մի այլ դժբախտութիւն էր, որ վրայ հասաւ մեր լեզուին: Ուղղագրական փոփոխութիւնները դիպան յատկապէս հայերէնի ձայնատրոններին ու երկբարբառներին:

«է» տառը ամէնուր փոխարինեցին «ե»ով, «օ» տառը ամէնուր փոխարինեցին «ո»ով (1940ի փոփոխութիւնը դրանց օրինական ուժ տուեց միայն արմատական բառերի սկզբում): Հայերէնի «յ» տառը կիրարկեցին թէ՛ բուն [յ] հնչիւնի համար, թէ՛ երկբարբառների փափկացուցիչ դերի համար (տե՛ս ստորեւ): Լիովին քանդեցին մեսրոպեան երկբարբառների տրամաբանութիւնը: Կիլիկեան «իւ» եւ «էօ» երկբարբառները գրեցին «յու» եւ «յո», առանց հաշուի առնելու դրանց իրական հնչումը. Սիւրմէլեան Սյուրմելյան, Լարագէօզեան Լարագյոզյան:

Յետանկախութեան հայերէնի վրայ շարունակում է մեծ ազդեցութիւն ունենալ ռուսերէնը, որը, հայաստանաբնակ հայերի մի զգալի մասի միակ օտար լեզուն լինելով, օտարալեզու տառադարձութիւնների գերակշիռ մասի աղբիւրն է: Բաւական է ծանօթանալ Վիքիպեդիայի որեւէ յօդուածի, համոզուելու համար, որ աղբիւրները, հետեւաբար եւ տառադարձութիւնը, առաւելապէս ռուսերէն են¹⁴:

Համեմատութեան համար բերում ենք կիլիկեան եւ սովետական ուղղագրութիւններով տառադարձած միքանի անուն. Montequieu-Մօնթէսքիէօ-Մոնտեսքյո, Depardieu-Տըփարտիէօ-Դեպարդիէ, Corneille-Գօնէլլ-Կոռնէլլ, La Bruyère-Լա Պրիյէր-Լա Բրյուեր, seigneur-սէնսէօր-սենյոր, Peugeot-Քէօժօ-Պէժօ:

Եթէ ինչ-ինչ հնչիւնների պարագայում (օտար անունների մէջ որոշ դիրքերում «է»ի փոխարէն «ե», «օ»ի փոխարէն «ո») սովետական ուղղագրութիւնը անգիտակից վերադարձ էր մեսրոպեան տրամաբանութեանը (որը անշուշտ ողջունելի է), 1922 եւ 1940ի ուղղագրափոխութիւնը ընդհանուր

¹⁴ Հայաստանցի դպրոցականը առ այսօր առանձին-առանձին ուսանում է ե՛ւ «ռուսաց լեզու եւ գրականութիւն» (պարտադիր), ե՛ւ մի որեւէ «օտար լեզու» առարկաներ (ըստ դպրոցի հնարատրութեան): Փաստօրէն՝ կրթութեան նախարարութիւնը այնպէս է ներկայացնում՝ կարծես թէ ռուսաց լեզուն *օտար* լեզու չէ:

առմամբ անգրագետ, հապճեպ եւ անհետեւողական մի նախաձեռնություն էր:

ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀՆՉԻՆԱՄԱՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայերէնի հնչիւնաբանութիւնն ու ուղղագրութիւնը ունեն սկզբունքներ, որոնք պատշաճ է, եւ անհրաժեշտ է, յարգել իւրաքանչիւր լեզուից կատարելիք տառադարձութեան ժամանակ՝ ինչպիսին էլ լինի գրականութեան սեռը (գիտական, հանրամատչելի կամ այլ): Եւս մէկ անգամ պնդենք, որ տառադարձութիւնը ոչ այլ ինչ է քան «յարմարագրութիւն», այն է՝ որեւէ օտար լեզուի յատուկ կամ հասարակ անունը հայերէն տառերով ճիշտ, յարմար եւ միակերպ գրելու արուեստը: Եւ հայը բոլորովին պէտք չէ որեւէ կերպ նեղուի, թէ հայերէնը չի կարողանում ճշգրտութեամբ վերարտադրել այս կամ այն օտար լեզուի բոլոր հնչիւնները: Աշխարհի բոլոր լեզուները նոյն պայմաններում են գտնուում եւ բաւարարում են իրենց տառամթերքով:

Յիշեցման համար՝ ստորեւ ամփոփ ներկայացնում ենք հայերէն տառադարձութեան՝ նախորդ երկու յօդուածներում արծարծած սկզբունքները: Յօդուածները չծանրաբեռնելու համար մանրամասները չենք կրկնում, եւ ընթերցողին հրաւիրում ենք, նախքան որեւէ լեզուի տառադարձութեան անդրադառնալը, անպայման ծանօթանալ այդ սկզբունքներին (խօսքը ե՛ւ սոյն յօդուածի, ե՛ւ յօդուածաշարքիս բոլոր մնացած յօդուածների մասին է):

ա) Պայթական («բ-պ-փ», «գ-կ-ք», «դ-տ-թ») եւ պայթաշփական («ջ-ճ-ջ», «ծ-ժ-ց») բաղաձայնների եռաստիճան կարգը հայերէն դասական տառադարձութեան ողնասիւններից մէկն է: Եթէ ուզում ենք մետրոպեան՝ շաւղով առաջ ընթանալ, պէտք է մէկընդմիջտ հրաժարուենք կիլիկեան («խլագուրկ», երկաստիճան) համակարգը կիրարկելուց: Եւ դա ո՛չ թէ նրա համար, որ կիլիկեան համակարգը «սխալ» է հնչիւնաբանօրէն (չկայ «սխալ» հնչիւնաբանութիւն, ամէն լեզուի կամ լեզուաճիւղի հնչիւնաբանութիւն «ճիշտ» է իր համակարգի համար), այլ պարզապէս՝ որովհետեւ հայերէնի մետրոպեան այբուբենը հայոց միջնաշխարհի եռաստիճան կարգի վրայ է հիմնուած, ինչպէս նաեւ՝ որովհետեւ հայերէնի բարբառների մեծ մասը ճանաչում է եռաստիճան դրութիւնը:

բ) «Ե» եւ «է» տառերի գրութեան օրէնքները յարգում են մետրոպեան ուղղագրութիւնը, այն է. տառադարձութիւններում «Ե»ը գրում ենք բառասկզբին եւ բառամիջում բաղաձայններից առաջ, իսկ «է»ն՝ բառավերջին կամ ձայնատրից առաջ: «Ե»ը եւ «է»ն իրար լրացնող տառեր են: «Ե»ը մեր այբուբենի API [e] հնչիւնն է, ինչպէս եւ արդի հայերէնում «է» տառը: Բառասկզբի «Ե»երը պարտադիր չէ [յե] արտասանել:

գ) Օտար API [o] հնչյունը տառադարձութիւնների մէջ ամէնուր արտայայտում ենք մեսրոպեան «ո» տառով: Բառասկզբին, ինչպէս եւ «ե»ի պարագայում, պարտադիր չէ «ո»ն [վո] ընթերցել: Կիլիկեան ժամանակներից մուտք գործած կլոր «օ» տառը տառադարձութեան համար չէ: Այն ճիշտ չէ գործածել ո՛չ բառասկզբին, ո՛չ բառամիջում, ո՛չ էլ բառավերջին:

դ) Բառամիջում եւ բառավերջին խուսափում ենք «ը» գրելուց: Մեսրոպեան ուղղագրութիւնը հիմնուած է ա՛յդ սկզբունքի վրայ եւ մենք էլ պարտաւոր ենք այն յարգել:

ե) Օտար API [v] եւ [w] հնչյւնները հայերէն արտայայտում ենք «վ, ւ, ու» տառերից մէկով, ըստ հայոց դասական ուղղագրութեան կանոնների: Բառասկզբում գրում ենք միմիայն «վ» (երբեք՝ «ու»): Ըստ հնարաւորութեան օգտագործում ենք հայերէնի «աւ, եւ, իւ» երկբարբառները: Բառամիջում՝ բաղաձայնից յետոյ եւ ձայնաւորից առաջ, գերադասում ենք գրել (այնտեղ ուր դա թոյլ է տալիս ստուգաբանութիւնը) «ու»:

զ) Հայերէնում բաղաձայնին չի կարող հետեւել «յ» տառը (բարդութիւնները չհաշուած): Ուստի՝ օտար «ia, ie, ii, io, iu» համակցութիւնները արտայայտում ենք բառամիջում «իա, իե, ի¹⁵, իո, իու» կապակցութիւններով (եւ ոչ թէ մեր երկբարբառներով): Բառասկզբին, սակայն, կարող ենք եւ իսկապէս գրում ենք «յա, յե, յի, յո, յու»:

է) Բառասկզբի «յ» տառի արտասանութիւնը անհրաժեշտաբար [h] չէ: Աւանդական անուններում այն [h] է հնչում, սակայն նոր տառադարձութիւնների մէջ այն պէտք է իր ձայնով՝ [j] արտասանենք: «Յ» տառը փաստօրէն գրում ենք միայն երկու պարագայում. բառասկզբին՝ ձայնաւորներից առաջ¹⁶, եւ բառամիջում (կամ բառավերջին)՝ միայն «ա» եւ «ո» տառերից յետոյ: Մեսրոպեան գրութեանը խորթ է «յ» տառը դնել «ե, է, ի, օ, ու, ը» տառերից յետոյ:

ը) Հայերէնի երկբարբառներն ու եռաբարբառներն են. «այ, ոյ, աւ (օ), եւ, իւ, եա, տ, եայ, եաւ (եօ), տյ»: Որեւէ տառադարձութեան ժամանակ կարելի է յարգել սրանց գրութեան կանոնները եւ ջօրինել նոր կապակցութիւններ, որոնք խորթ են ե՛ւ հայերէնի հնչիւնաբանութեանը, ե՛ւ մեսրոպեան ուղղագրութեանը:

Հայերէնի «իւ» եւ «եա» երկբարբառների համար նշենք, որ, հակառակ հայ լեզուաբանների գրեթէ համընդհանուր կարծիքին¹⁷, դրանք (մի կողմ թողած, բնականաբար, «իւ»ի [իվ] արտասանութիւնը, նմանապէս արեւմտահայերէնին յատուկ API [y] հնչումը, ֆրանսերէն՝ «ս») *երկակի* արտասանութիւն ունեն գրական արեւելահայերէնում (եւ ոչ թէ միայն [յու] եւ [յա]): Դրանց առաջին, եւ ամենայաճախ դերը, նախորդ բաղաձայնը

¹⁵ Կրկնակ «իի»ն պարզում է:

¹⁶ Միքանի օրինակ էլ ունենք «ղ» տառից առաջ. յղի, յղել, յղկել, յղփանալ են.:

¹⁷ Այստեղ միայն համառօտ ենք անդրադառնում հարցին: Նիւթը ընդարձակ է:

փափկացնելն է: Իրենք՝ երկբարբառները, արտասանում են համապատասխանաբար «ու» եւ «ա», միեւնոյն ժամանակ փափկացնելով նախորդող բաղաձայնը: Օրինակ. **ծիւն**, **սիւն**, **նիւթ**, **սենեակ**, **վայրկեան**, **Պետրոսեան**, **Մեսրոպեան** բառերում բնաւ չունենք [յու] եւ [յա] արտասանութիւններ, այլ պարզապէս՝ թաւ ընդգծուած բաղաձայնները փափուկ են հնչում, եւ սրանց յաջորդում է [ու] կամ [ա] պարզ ձայնաւոր¹⁸: Երկրորդ՝ նուազ յաճախ արտասանութիւնը, լեզուաբաններին ծանօթ [յու] եւ [յա] հնչումն է: Դա տեղի է ունենում [ղ, խ, ռ] բաղաձայններից յետոյ, որոնք հայերէնում միայն կոշտ են (երբեք փափուկ չեն կարող արտասանուել): Դրանցից յետոյ իրօք լսում ենք [ղյու, դյա], [խյու, խյա], [ռյու, ռյա]: Օրինակ. **առիւծ**, **աղիւս**, **խիւս**, բաբա**խիւն**, **Մուշեղեան**, **Ջախջախեան**, **Աճառեան**: Բառասկզբին ունենք միայն «իւր, իւղ (մեսրոպեան ուղղագրութեամբ՝ եղ)» արմատները, որտեղ նոյնպէս լսում ենք [յու]: «Եա» երկբարբառով սկսող հայերէն արմատ չունենք. եղած փոխառութիւնները (եար, եափնջի, եայլաղ, եախա...) կիլիկեան ուղղագրութեան արտացոլումն են:

Ինչպէս վերը նշեցինք, սկզբունքօրէն «եա» երկբարբառը տառադարձութիւնների մէջ չենք օգտագործում, դրա փոխարէն գրում ենք «իա»: Ինչ վերաբերում է «իւ» երկբարբառին, դա կիրարկում ենք միայն եթէ ուզում ենք փափկացնել նախորդ բաղաձայնը: Ինչպէս նմանապէս վերը տեսանք, լատինատառ «iu»-ի համարժեքը հայերէն «իւու» է: Օրինակ. Ֆրանսերէն *bureau*-ն կարող ենք տառադարձել «բիւրո», բայց անգլերէն *beautiful*-ը պէտք է գրենք «բիւթիֆուլ», *New York*-ը **Նիու Յորք**:

թ) Նոր լեզուների տառադարձութիւնների մէջ օտար API [r] կամ [R] (տե՛ս ստորեւ) հնչիւնը ամէնուր գրում ենք «ր», բացառութեամբ բառասկզբի, ուր գրում ենք «ռ»: Ինչպէս հիմնաւորել ենք յօդուածաշարքիս Բ. մասում, «ռ»-ի գրութիւնը «ն»-ից (նաեւ՝ «լ»-ից) առաջ պարտադիր չէ:

Հիմնարար այս սկզբունքների մասին աւելի մանրամասն տե՛ս մեր նախորդ երկու յօդուածների համանուն բաժիններում (*Հայերէն տառադարձութեան հնչիւնա(բան)ական սկզբունքները*):

ՖՐԱՆՍԵՐԷՆԻՅ ՏԱՌԱԴԱՐՁԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՒ ՆՐԲՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆրանսերէնն ու հայերէնը երկուսն էլ ունեն երեսունվեցական հնչոյթ¹⁹, սակայն մեծապէս տարբերում են ձայնաւորների ու բաղաձայնների թուով: Ֆրանսերէնն ունի 16 ձայնաւոր, 3 կիսաձայն, 17 բաղաձայն: Հայերէնն ունի 6 ձայնաւոր, 1 կիսաձայն, 29 բաղաձայն: Ասել է թէ՛ տառադար-

¹⁸ Երկբարբառների փափկացուցիչ դերի մասին առաջին անգամ արտայայտուել ենք մի այլ յօդուածում (Արմէն Միքայէլեան, «Ուղղագրամարտ (հայերէն ուղղագրութեան ներկայ եւ ապագայ խնդիրները)», *Բազմավէպ*, ՃՀԴ. տարի, թիւ 3-4, Վենետիկ 2016, էջ 234-235:

¹⁹ Չհաշուած ֆրանսերէնի երկու «օտար» հնչոյթները ([ŋ] եւ [h]):

ծութեան ժամանակ (թէ՛ ֆրանսերէնից հայերէն, թէ՛ հակառակը) ստիպուած ենք գոհանալու եղած տառամթերքով: Հայկաբան մեր սկզբունքներին բոլորովին խորթ է նոր տառերի ու տառակապակցութիւնների յորինումը:

Ստորեւ անդրադառնում ենք ֆրանսերէն տառադարձութեան գլխաւոր նրբութիւններին: Տառադարձումները հայկաբան հայերէնի պատմականօրէն կանոնարկուած վերոնշեալ դասական սկզբունքների համաձայն են²⁰:

ա) Ստորին աղիւսակը ներկայացնում է ֆրանսերէնի երկերանգ պարզ ձայնաւոր հնչոյթներն ու դրանց ռնգային զուգահեռները: Հայի ականջին խորթ է այդ երկու երանգների տարբերակումը, եւ այստեղ կարիք չունենք դրանց հնչիւնական առանձնայատկութիւնները պարզաբանելու:

հայերէն պարզ ձայնաւոր	ֆրանսերէն պարզ ձայնաւոր		ֆրանսերէն ռնգային ձայնաւոր	հայերէն «ռնգային» տառադարձում
	Ա. երանգ	Բ. երանգ		
ա	[a]	[ɑ]	[ǎ]	ան/մ *
ե/է	[e]	[ɛ]	[ɛ̃]	են/մ *
ո	[o]	[ɔ]	[ɔ̃]	ոն/մ *
ու	[ø]	[œ]	[œ̃]	ուն/մ *
* «մ, բ, պ» հնչիւններից առաջ հայերէն «ն»ի փոխարէն պէտք է գրել «մ» (ինչպէս եւ ֆրանսերէնում է)				

Ֆրանսերէն ոչ ռնգային (պարզ) ձայնաւորները հայերէն տառադարձում ենք պարզ ձայնաւորներով: Ֆրանսերէնի ամէն զոյգին համապատասխանում է հայերէն մէկ ձայնաւոր: Քանզի զոյգ ձայնաւորների ընտրութիւնը բառի մէջ ֆրանսերէնում մեծ մասամբ դիրքային է (այսինքն՝ դրանք մեծ մասամբ հնչոյթի դեր չեն կատարում), հայերէնը շատ բան չի կորցնում երկուսն էլ նոյն ձայնաւորով արտայայտելուց: Օրինակներ. **Amiens Ամիեն**, **Angoulême Անգուլեմ**, **Bordeaux Բորդո**, **La Rochelle Լա Ռոշել**, **Dijon Դիժոն**, **Guéret Գերէ**, **Périgueux Պերիգո**, **Évreux Եւրո**, **Meuse Մոզ**, **Gilles Deleuze Ժիլ Դլոզ**:

Հայերէնը չունի ռնգային ձայնաւորներ: Ռնգային հնչում տալու համար՝ ձայնաւորին յաջորդում ենք [ն] հնչիւնը. **Vendée Վանդէ**, **François Միտերան**, **Saintes Սենտ**, **Georges Brassens Բրասենս**, **Jean Dujardin Ժան Դիւժարդեն**, **Jean-Paul Belmondo Բելմոնդո**, **Joe Dassin Ժո Դասեն**: «Ն» տառի փոխարէն «մ» գրելը (այսինքն՝ համաձայն ֆրանսերէնի ուղղագրութեան) հնարաւոր եւ ցանկալի է միայն այն դէպքերում, երբ յաջորդ տառը ֆրանսերէնում շրթնային է եւ իսկապէս հնչում է. **Chambéry Շամբերի**, **camembert կամամբեր**:

²⁰ Գրածը չճանրաբեռնելու համար որոշեցինք անունների ու իմաստների թարգմանութիւնները ֆրանսերէն օրինակներում չգրել:

Վերջին՝ [œ] ռնգայինի համար ընտրեցինք ոչ թե «ոն» տառադարձումը (դրա պարզ ձայնաւորին համազոյգ), այլ «ուն»: Նախ՝ որովհետեւ դրա հնչումը աւելի նման է հայերէն [ըն] հնչողութեանը, երկրորդ՝ որ դրա գրութեան «UN» տառակապակցութիւնը գալիս է լատիներէն «UN»-ից [ուն]: Օրինակ. **սո ուն** (անորոշ յօդ), **tribun** տրիբուն, **münster** մունստեր (գերմանալեզու ծագման անուն), **Albert Lebrun** Ալբեր(տ) Լբրուն:

բ) Ձայնաւոր միւս հնչոյթները միերանգ են, սակայն, ի տարբերութիւն նախորդների, ունեն զուգահեռ կիսաձայն հնչիւններ:

հայերէն ձայնաւոր	Ֆրանսերէն ձայնաւոր	Ֆրանսերէն կիսաձայն	կիսաձայնը հայերէն	
			բառասկզբին	բառամիջում
ի	[i]	[j]	յ	ի
ու	[u]	[w]	վ	ու
իւ, ու	[y]	[ɥ]	վ	ու

Պարզ ձայնաւորների օրինակներ. **Libération** Լիբերասիոն, **brie** բրի, **Marcel Proust** Պրուստ, **Moulins** Մուլեն, **Laure Manaudou** Մանողու, **Alexandre Dumas** Դիւմա, **Jules Verne** Ժիլ Վերն, **Marie Curie** Մարի Կիւրի, **François Truffaut** Տրիֆո, **Michel Galabru** Գալաբրու, **Alfred Dreyfus** Դրեֆուս, **Louis de Funès** Ֆիւնես:

«իւ» երկբարբառը հայերէնում պէտք է գրել միայն այն բաղաձայններից յետոյ, որոնք ընդունակ են փափուկ հնչելու: Ինչպէս վերը նշեցինք, առաջարկում ենք «իւ» չգրել «դ, խ, ո» բաղաձայններից յետոյ, որոնք իրենց բնութեամբ չեն կարող փափուկ լինել, եւ հայի ականջին առաջ են բերում տհաճ զուգորդութիւններ: Օրինակ. **Rutebeuf**, Ռուտբոֆ, եւ ոչ թէ Ռիւտբոֆ (հայերէն անարտասանելի), նմանապէս՝ **rue nou** (փողոց), **Jean de La Bruyère** Բրուէր:

Կիսաձայնների օրինակներ. **Lyon** Լիոն, **Patricia Kaas** Պատրիսիա, **Poitiers** Պուատիէ, **Rouen** Ռուան, **Louis Luthi**, **Puy-de-Dôme** Պուի-դը-Դոմ, **Paul Eluard** Ելուար, **Ouagadougou** Վագադուգու (լաւ օրինակ է [w] հնչիւնը «վ» տառադարձելու համար, ուստի սխալ է Ուագադուգու ձեւը), **wallon** վալոն (նոյն տրամաբանութիւնը), **Huisseau-sur-Cosson** Վիսո («H» տառը ստուգաբանական չէ եւ չարժէ տառադարձել), **Huisne** Վին կամ Հուին:

Ֆրանսերէնի այս երեք ձայնաւորները, զանազան դիրքերում, կարող են փոխարկուել համապատասխան կիսաձայնների եւ ընդհակառակը: Ուստի լիովին արդարանում է ձայնաւորների եւ կիսաձայնների հայերէն միանման գրութիւնը:

գ) Առաջին երկու կէտերում նշուած ձայնաւոր հնչիւնները ճշտելու համար՝ բերում ենք ֆրանսերէնի երկբարբառների ու եռաբարբառների հնարաւոր գրութիւնները, իբրեւ յաւելեալ օգնութիւն բանաւոր ձայները ճիշտ տառադարձելու համար:

Ֆրանսերեն երկբարբառներ	հայերեն տառադարձումը	Ֆրանսերեն եռաբարբառներ	հայերեն տառադարձումը
ai / ay [ɛ]	ե/է	eau [o]	n
ei / ey [ɛ]	ե/է	œu [ø, œ]	n
oi / oy [wa, wo]	ուա, վա		
au [o, ɔ]	n		
eu / ue* [ø, œ]	n		
ou [u]	ու		
* «c»ից եւ «g»ից առաջ			

Օրինակներ. **Maine Մեն**, **François Rabelais** Ֆրանսուա Ռաբլե, **Voltaire** Վոլտեր, **Joachim du Bellay** ժովակիմ (Յովակիմ) դու Բելե, **Le Puy-en-Velay** Լը Պուի-ան-Վլե, **Seine Մեն**, **Alfred Dreyfus** Դրեֆուս, **Talleyrand** Տալերան (Հայաստանում այսօր՝ Թալեյրան), **Aveyron** Աւերոն, **Poitou** Պուատու, **Loire** Լուար, **Blois** Բլուա, **François** Ֆրանսուա, **Troyes** Տրուա, **Ségolène Royal** Ռուայալ, **Hérault** Հերո, **Auvergne** Ովերն, **Montauban** Մոնտոբան, **Gustave Flaubert** Ֆլոբեր, **Creuse** Կրոզ, **Gérard Depardieu** Դպարդիո, **Montesquieu** Մոնտեսքիո, **Richelieu** Ռիշ[ը]լիո, **Peugeot** Պոժո, **Marcel Proust** Պրոստ, **Toulon** Տուլոն (Թուլոն), **Bordeaux** Բորդո, **Beauvais** Բովե, **Georges Clemenceau** Կլեմանսո, **Babœuf** Բաբոֆ:

Ոնգային «ain (aim), ein (eim), oin» եռաբարբառները արտայայտելու համար գործում է նոյն սկզբունքը՝ աւելացնում ենք «ն» (կամ «մ») տառը: Օրինակ. **Saintes Մենտ**, **Ain** Են, **Valéry Giscard d'Estaing** Ժիսկար դ'Եստան, **Jean de Joinville** Ժան դը Ժոնվիլլի, **Reims** Ռեմս («m» տառը ստուգաբանական է, ՀՀում ընդունուած «Ռեյմս» ձեւի «յ» տառը աւելորդ է):

Ֆրանսերէնում այսօր [o, ɔ] հնչող «au» երկբարբառը, չնայած հայերէնում տեղի ունեցած պատմական նոյն փոփոխութեանը, տառադարձում ենք «ո» եւ ոչ կլոր «օ», ինչպէս կարելի էր ակնկալել: Յիրաւի, ֆրանսերէնի պատմական հնչիւնափոխութիւնը ֆրանսերէնի ներքին օրէնք է, հայերէնինը՝ հայերէնի ներքին օրէնք (թէեւ նոյնակերպ), եւ ճիշտ չենք համարում հայերէնի ուղղագրութեան մէջ արտացոլել օտար լեզւում տեղի ունեցած պատմական մի երեւոյթ: Մենք հին հայերէնի «աւ» երկբարբառը, երբ այն այսօր [ո] է հնչում, կարո՛ղ ենք գրել կլոր «օ»: Սակայն իրաւունք չունենք նոյնը անելու օտար մի լեզուի ուղղագրութեան հետ: Նախ՝ մենք չգիտենք, թէ արդեօք ֆրանսերէնի բոլոր «au»երը ստուգաբանօրէն ճիշտ են (օրինակ **Auvergne** գալիս է գաղղիական **Arverne** ցեղանունից), երկրորդ, եթէ ամէն «au» հայերէն կլոր «օ» գրէինք, ապա հայերէն տառադարձութեան մէջ «ո»երի եւ «օ»երի մի անասելի շփոթ կը լինէր: Այդ նկատառումներից ելնելով՝ որոշեցինք, որ ամէնուր «ո» գրելը միակ ճիշտ լուծումն է:

Lausanne Լոզան, **Beaune** Բոն, **Aube** Ուբ, **Aude** Ոդ, **Aurillac** Ուրիլակ, **Auch** Ոշ, **Chaumont** Շոմոն, **Pau** Պո:

Ուշադրութիւն. երկկէտով (ֆրանսերէն՝ tréma) առանձնացրած ձայնատրները երկբարբառ չեն. **Citroën** Սիտրոյեն, **Jean Antoine de Baïf** Բայիֆ, **Loïck Peyron** Լոյիկ Պերոն:

դ) Ֆրանսերէնի համը [ə] կոչուող ձայնատրի տառադարձումը նուրբ հարց է: Այն հանդիպում է բառամիջին ու բառավերջին (երբեք բառասկզբին): Բառավերջին այն մեծ մասամբ լիովին համը է, եւ հայերէն էլ այն բնաւ չենք նշում. **Loire / Loir** Լուար (երկու տարբեր գետերի անուններ են), **Le Monde** Լը Մոնդ, **Voltaire** Վոլտեր: Որոշ տիպարի վերջատրութեան բառերում, յստակ արտասանութեան ժամանակ, այն կարող է հնչել: Սակայն այս դէպքում էլ այն հայերէն չենք արտայայտում. **Chartres** Շարտր (ֆրանսերէնը հնչում է [շարտրը], հայերէնը՝ [շարտը]), **Jean-Paul Sartre** Սարտր, **Notre-Dame** Նոտր-Դամ, **Villemomble** Վիլմոմբլ, **Sambre** Սամբր:

Կիլիկեան տառադարձութիւնը [ը] հնչիւնը արտայայտում է նաեւ բառամիջում, սակայն մենք առաջարկում ենք հրաժարուել այդպիսի տառադարձութիւնից: Բառամիջում «ը» գրելը խորթ է հայերէնին, եւ բառի տեսքը կը շահի, եթէ այդ «ը»երը բնաւ չգրենք. **Besançon** Բզանսոն, **Montpellier** Մոնպիլէ²¹, **Nevers** Նուեր (Նվեր): **Genève**-ը գրում ենք նաեւ ժընեւ, սակայն աւելի հայեցի է Ժնեւ (առանց «ը»ի):

Միակ դէպքը, երբ «ը» տառի գրութիւնը անհրաժեշտ է, միավանկ բառերն են. **le «ը»**, **de «ը»**, **ne «նը»**, **ce «սը»**, **je «ժը»**, **me «մը»**, **se «սը»**, **te «տը»**: Օրինակ. **Le Mans** Լը Ման, **Le Monde** Լը Մոնդ, **Charles de Gaulle** Շարլ դը Գոլ, **Louis de Funès** Լուի դը Ֆինես, **va-comme-je-te-pousse** վական-ժը-տը-պուս:

ե) Ֆրանսերէնի խուլ պայթականները [p, t, k] տառադարձում ենք հայերէն պարզ խուլերով՝ [պ, տ, կ], քանզի նրանք այդպէս էլ հնչում են ֆրանսերէնում (մի երկու բացառութեամբ, տե՛ս ստորեւ, կէտ ժե. եւ ժգ.)²²: Հետեւեալ բաղաձայնների տառադարձումն ընդհանրապէս դժուարութիւններ չի յարուցում. [b-p, d-t, g-k, z-s, ʒ-f, v-f, m, n, l], որոնք համապատասխանաբար լինում են. «բ-պ, դ-տ, գ-կ, զ-ս, ժ-շ, վ-ֆ, մ, ն, լ»: Օրինակներ. **Bourges** Բուրժ, **Perpignan** Պերպինիան, **Drôme** Դրոմ, **Tours** Տուր, **Garonne** Գարոն, **Carcassonne** Կարկասոն, **Émile Zola** Զոլա, **Somme** Սոմ, **Gironde** Ժիրոնդ, **Charente** Շարանտ, **Vannes** Վան, **Finistère** Ֆինիստեր, **Mâcon** Մակոն, **Nancy** Նանսի, **Limoges** Լիմոժ:

²¹ Այստեղ «պ»ից առաջ «մ» չենք գրում ֆրանսերէնի «t»ի (թէեւ համը) պատճառով:

²² Ընդհանրապէս, ռոմանական լեզուների խուլ պայթականները պարզ են, իսկ գերմանական լեզուներինը՝ շնչել:

զ) Ֆրանսերէնի [R] բաղաձայնն այսօր, եւրոպական Ֆրանսիայի գրեթէ ողջ տարածքում, հնչում է արդի հայերէն [ղ] բաղաձայնի նման (մի քիչ անելի փափուկ): Սակայն այդ հնչոյթը ֆրանսախօս երկրներում ունի առնուազն երեք արտասանութիւն. նման հայերէն [ռ]ին, [ղ]ին, իսկ երրորդը կոկորդային է՝ լեզուակի միջոցով: Ստուգաբանօրէն այդ հնչոյթը համապատասխանում է լատիներէնի [r] հնչիւնին (հայերէն [ռ]ի եւ [ր]ի միջինը), եւ ռոմանական միւս լեզուների մեծամասնութիւնը նոյնպէս հարազատ է մնացել պատմական [r] հնչիւնին: Եւրոպական եւ մերձատրարեւելեան բոլոր լեզուները ֆրանսական [R]ն համարում են իրենց «ր/ռ»ի համարժէքը (հայերէնը նոյնպէս): Դա է պատճառը, որ հայերէնը շարունակում է այն տառադարձել «ր/ռ» («ր»ի եւ «ռ»ի տարբերութիւնը՝ ըստ հայերէնի ուղղագրութեան): Օրինակներ. La **Rochelle** Լա Ռոշել, Jean **Racine** Ռասին, **Robespierre** Ռոբէսպիէր, Denis **Diderot** Դիդրո, Emmanuel **Macron** Մակրոն, Béarn **Բէարն**, Marne **Մարն**, Jules Verne **Վերն**:

Սխալ եւ անճոռնի են ֆրանսերէնի [R]ն հայերէն [ղ] տառադարձելու եզակի փորձերը, ինչպէս՝ Boulangerie Բուլանժ(ե)ղի: Դա միայն կարելի է անել խօսքին ինչ-որ երանգ կամ երգիծանք տալու համար, բայց ոչ սովորական տառադարձութեան մէջ:

է) Ֆրանսերէնն ունի հայերէն «ն»ին համապատասխան երկու հնչիւն: Սովորական [ն]ի կողքին ունի նաեւ փափուկ մի [ն] («ռ» mouillé – API [յ], բառացի՝ թաց «ն», գրութեան մէջ՝ «gn»): Հայերէնը չունի նման հնչոյթ, սակայն հնչիւնը մեր «իւ» եւ «եա» երկբարբառներից առաջ հնչող փափուկ «ն»ից շատ հեռու չէ. «նիւթ, նեարդ» բառերի մէջ «ն»ն մօտենում է API [յ]ին: Տառադարձութեան մէջ, այնտեղ որտեղ «gn»ին յաջորդում է հայերէն մի ձայնաւոր («ա, ե/է, ի, ո, ու»), այդ տարբերութիւնը արտայայտում ենք «իա, իե/է, ի, իո, իու» կապակցութիւններով: Օրինակներ. **Perpignan** Պերպիհնիան, **armagnac** արմանիակ, **Agnès** Անիէս **François Dagognet** Դագոնիէ, **Bobigny** Բոբիհի, **Lattre de Tassigny** Տասիհնի, **Avignon** Ավինիոն, **Agneaux** Անիոն, **Vignoux-sur-Barangeon** Բարանժոնի Վիհիոն, **Bagneux** Բանիոն, **seigneur** սենիոր:

Երբ «gn» տառակապակցութիւնը գտնւում է բառավերջին, կամ թէ նրան յաջորդում է մի բաղաձայն, առաջարկում ենք ոչ մի կերպ չարտայայտել «ն»ի փափկութիւնը: Օրինակ. **Compiègne** Կոմպիէն, **Digne-les-Bains** Դին-լէ-Բեն, **bleu d'Auvergne** բլո դ'Ուվերն, **Boulogne** Բուլոն, **Châtagneraie** Շատենիւրէ: Երբեմն հանդիպում ենք «յն» տառադարձութեան (շամպայն՝ գինու տեսակ), սակայն մենք կողմնակից չենք դրան, որովհետեւ նախ՝ այդպիսի գրութիւնը անելի է հեռանում բնօրինակի արտասանութիւնից, երկրորդը՝ հակառակ է ստուգաբանութեանը: Այդպիսի հնարքի միակ նպատակն է ինչ-որ կերպ արտացոլել ֆրանսերէնի այդ առանձ-

նայատկությունը, մի բան, որին, ինչպես ընթերցողը հասկացել է արդեն, մենք դեմ ենք սկզբունքորեն²³:

Միայն երկրանուններում, ուր ֆրանսերենի «gn»-ն ստուգաբանորեն գալիս է լատիներեն «nia»-ից, հայերեն գերադասելի է գրել «նիա»։ Champagne Շամպանիա (երկրանուն, ի տարբերություն արդեն ընդունուած «շամպայն» գինու տեսակի), Bretagne Բրետանիա, Gascogne Գասկոնիա, ինչպես եւ ընդունուած է գրել Սպանիա (Espagne), Կատալոնիա (Catalogne) (թեւեւ վերջիններս բուն ֆրանսական անուններ չեն, դրանց վերջատրությունները սերում են լատինական «nia» ձեւից)։

ը) Ֆրանսերենի պատմական փափուկ [լ] հնչոյթը («l» mouillé – API [λ], բառացի՝ թաց «լ») այսօր հնչում է կիսաձայն [յ] (հայերեն [յ])։ Գրութեան մէջ հանդիպում է ail(le), eil(le), il(le), oil(le), ouil(le), euil(le), ueil(le) տառակապակցութիւններով։ Թուում է թէ այն պէտք էր տրամաբանօրէն գրել «յ»։ Սակայն, մի կողմից՝ հայերէնը ամէնուր չի ընդունում «յ» տառը (միայն «ա, ո» տառերից յետոյ), միւս կողմից՝ ասանդոյթը այդ փափուկ [լ]երը հայերէն «լ» է գրել։ Ինչպէս՝ Marseille Մարսել (կայ նաեւ Մարսելլ), Versailles Վերսալ (կայ նաեւ Վերսայլ), Bastille Բաստիլ, Braille Բրայլ, Corneille Կորնելլ (սովետական ուղղագրութեամբ), bataillon բատալիոն։ Նոյնիսկ Էմիլ Լիտրէի հռչակաւոր բառարանը շարունակում էր հետեւել պատմական արտասանութեանը²⁴։ Ֆրանսերէն մի քանի բառերի մէջ այն դեռեւս սովորական բաղաձայն [լ] է հնչում. mille միլ, ville վիլ, Maroilles Մարուալ։ Հարցը նորք է, սակայն կարծում ենք, որ լաւ կը լինէր շարունակել եղած աւանդոյթը եւ փափուկ [լ]ն տառադարձել «լ»։ Corneille Կորնելլ, Camille Կամիլ, Roussillon Ռուսիլ(ի)ոն, François Villon Վիլլոն, Aurillac Որիլակ, Argentueil Արժանտուլ, Daniel Auteuil Դանիել Ոտուլ։ Իսկապէս, ֆիլ (fille), ֆամիլ (famille), Գիյոմ (Guillaume), Միրել (Mireille) գրելը տհաճ է հայոց ուղղագրութեան տեսանկիւնից։

թ) «Յունարէն ի» կոչուող տառը («y», «i grec») ֆրանսերէնում կա՛մ համարժէք է լատիներէն «i»-ին, կա՛մ որոշ դէպքերում արժէ «ii» (երկու «i»), որոնցից մէկը [ի]ի ձայն ունի, միւսը՝ [յ]ի։ [ի] հնչելու դէպքում տառադարձում ենք «ի» (բայց ոչ «իւ» ինչպէս յունարէն զանազան բառերում)։

²³ Թերահաւատներին յիշեցնենք, որ նոյնիսկ կոշտ ու փափուկ բաղաձայններով հարուստ ռուսերէնից տառադարձած անունների մէջ զանց ենք առնում հնչիւնների փափկութիւնը։ Ильмень լճի անունը, օրինակ, գրում ենք «Իլմեն», առանց հաշուի նստելու բաղաձայնների փափկութեան հետ։

²⁴ “Terme de grammaire. Lettre mouillée, se dit de la lettre l, simple ou double, qui se prononce comme dans ailleurs, bail, etc. L’l ou les ll mouillées ne sont pas le même son que l’y devant une voyelle, avec lequel on les confond par abus dans la prononciation, à Paris particulièrement” (É. Littré, *Dictionnaire de la langue française*, éd. Hachette, Paris 1873-77, “mouillée” յօդուածի մէջ)։

pyramide պիրամիդ, dynamite դինամիտ, Annecy Անսի, Cyrano de Bergerac Սիրանո դը Բերժրակ, Nancy Նանսի, Yvelines Իվլին: [Յ] ձայնը պարունակելու դեպքում հետեւում ենք հայերէնի ուղղագրութեանը, այսինքն՝ «յ»ն արտայայտում ենք միայն անհրաժեշտութեան եւ հնարաւորութեան դեպքում, եւ ոչ այլուր. Henri Troyat Տրուայա, Yonne Յոն, Mayenne Մայեն, Jean de La Bruyère Լա Բրուեր:

ժ) Աւանդոյթ է դարձել բառակերջի եւ բառամիջի համը բաղաձայնները հայերէն չարտայայտել. budget բիջէ, portrait պորտրէ, Albert Camus Ալբեր Կամ(ի)ու, Alfred de Musset Միւսէ, Brigitte Bardot Բարդո, Pierre Ronsard Ռոնսար, Louis Լուի: Սակայն, բացառապէս հագուադէպ, պարզութեան կամ ստուգաբանութեան համար, հնարաւոր է դրանք գրել, մանաւանդ այն բառերում, որոնք ունեն հայերէն զուգահեռ համարժէքներ. օրինակ՝ plomb բառը կարող ենք տառադարձել «պլոմբ», թէեւ զուտ ֆրանսերէն հնչողութեամբ պէտք է գրէինք «պլոն»:

ժա) Ֆրանսերէնի որոշեալ յօդը եւ «de» նախդիրը յատուկ ուշադրութեան են արժանի, քանզի բազմաթիւ անունների բաղադրութեան մէջ են մտնում: Դրանք կարող են ներկայանալ հետեւեալ ձեւերով՝ իբրեւ առանձին բառ կամ յատուկ անուանը կից գրութեամբ.

	Ֆրանսերէն	առանձին գրութեան դեպքում	անուանը կից գրութեան դեպքում
արական յօդ բաղաձայնից առաջ	le	լը	Լ-
իգական յօդ բաղաձայնից առաջ	la	լա	Լա-
որոշեալ յօդ ձայնաւորից առաջ	l'	լ'	Լ-
որոշեալ յօդ յոգնակի	les	լէ, լեզ	Լե(զ)-
նախդիրը բաղաձայնից առաջ	de	դը	Դ-
նախդիրը ձայնաւորից առաջ	d'	դ'	Դ-
նախդիրը արական յօդով	du	դու	Դիւ-, Դու-
նախդիրը իգական յօդով	de la	դլա, դը լա	Դլա-
նախդիրը յօդով ձայնաւորից առաջ	de l'	դը լ'	Դլ-
նախդիրը յոգնակի յօդով	des	դէ, դեզ	Դե(զ)-

Նոյնիսկ ֆրանսերէնում սրանց գրութիւնը բաական խառն է: Դրանք կարող են գրուել ե՛ւ անունից անջատ (գլխագիր կամ փոքրագիր), ե՛ւ անունին միաձոյ: Երբեմն անուան մաս են համարում, երբեմն՝ ոչ: Երբեմն դրանք հաշուի են առնում այբբենական ցուցակներ կազմելիս, երբեմն՝ ոչ:

Հայերենը սկզբունքորեն կարող է երկու մօտեցում ունենալ. կա՛մ գրել ինչ-պէս ֆրանսերէնն է գրում, կա՛մ մոռանալ ֆրանսերէնի ուղղագրութիւնը եւ հայերէն գրել ամէն ինչ միաձոյլ՝ մէկ բառով: Թւում է թէ միաձոյլ գրելը գայթակղիչ տարբերակ է, եւ մենք անձամբ այդպէս էլ կը գրէինք, եթէ համոզուած լինէինք, որ հայ հասարակութիւնը կը կարողանար հետեւել այդ առաջարկին (իսկապէս, ինչո՞ւ պէտք է *d'Artagnan*ը գրենք դ'Արտան-իան, եթէ հանգիստ կարող ենք գրել Դարտանիան, կամ ինչո՞ւ գրենք Լա Ֆոնտեն, եթէ արդէն գրած ունենք Լաֆոնտեն):

Ամէն դէպքում, ինչպէս վերը արդէն խօսել ենք, միաձոյլ գրութեան դէպքում պէտք է խուսափել բառամիջում «ը» գրելուց: Միաձոյլ գրութեան օրինակներ. Delavallade Դլավալադ, Delahousse Դլահուս, Duhamel Դիւհա-մել, Desmoulins Դեմուլեն, Dujardin Դիւժարդեն, Delarue Դլառու, Deschamps Դեշան, Dupont Դիւպոն, Dupré Դիւպրէ, Delacroix Դլակրուա, Delahaye Դլահէ, Leclerc Լկլեր, Labadie Լաբադի, Lesage Լսաժ: Անջատ գրութեան օրինակներ. La Vallière Լա Վալիեր, L'Enfant Լ'Անֆան, L'Haj-les-Roses Լ'Հայի-լէ-Ռոզ, La Boétie Լա Բոյետի (հին եւ ռքսիտաներէն ար-տասանութեամբ՝ Լա Բուատի), La Fontaine Լա Ֆոնտեն, La Rochefoucauld Լա Ռոշֆուկո, Le Vau Լը Վո:

Երբեմն ֆրանսերէնը ինքն է երկբայում՝ Lebas կամ Le Bas (Լբա/Լը Բա):

Հարցը նորք է եւ մասնագիտական քննարկման արժանի:

Ժբ) Ֆրանսերէնի հնչիւնակցութիւնը (liaison) պէտք է արտայայտել, օրինակ՝ les_amis «լեզ ամի», Les_Échos Լեզ Եկո, La Ferrière-aux_Étangs Լա Ֆերիեր-ոգ-Ետան:

Ժգ) Ֆրանսերէնի ուղղագրութիւնը (իդէպ՝ հայերէնինը նոյնպէս) բաա-կան անորոշ է միջանի բառից բաղկացած յատուկ անունները միութեան գծիկով (trait d'union) գրելու չգրելու հարցում²⁵. Côte-d'Ivoire թէ՛ Côte d'Ivoire: Ոմանք իրենց ազգանունը գրում են Antoine de Saint Exupéry (հե-ղինակն ինքն այդպէս է գրել իր անունը), բայց գրքերի վրայ տպում են Saint-Exupéry (գծիկով)²⁶: Մենք անձամբ չենք սիրում միութեան գծիկը. դա աւելորդ դժուարութիւններ է առաջ բերում եւ առանձնապէս ոչ մի յաւելեալ տեղեկութիւն չի տալիս բառին կամ անուանը: Գուցէ, այս հարցում, հայե-րէնը շարունակի մնալ յեղեղուկ (ինչպէս եւ իդէպ ֆրանսերէնը²⁷ եւ գծիկ

²⁵ Maurice Grevisse et André Goosse, *Le Bon usage*, 14^e éd., De Boeck – Duculot, Bruxelles 2008, pp. 111 եւ յաջորդ:

²⁶ Նոյն, էջ 112-113:

²⁷ Ֆրանսերէն լեզուի բարձրագոյն խորհուրդը (le Conseil supérieur de la langue française) եւ Ֆրանսական Ակադեմիան (l'Académie française) 1990 թ. ուղղագրա-կան զանազան փոփոխութիւններ առաջարկեցին բազմաթիւ բառերի համար, սակայն նրանց առաջարկները «պարտադիր» չեն, եւ միութեան գծիկի գրու-թիւնը մասնատրապէս մնում է նոյնքան շփոթ, որքան եւ առաջ էր (Grevisse, *Le*

կիրարկող գործնականօրէն բոլոր լեզուները) – առ այսօր էլ գրում ենք Տէր Վարդանեան կամ Տէր-Վարդանեան:

Ժդ) Ֆրանսերէնում լայնօրէն գործածելի են լատիներէն տեսքով առանձին բառեր ու արտայայտութիւններ²⁸, որոնց համար ֆրանսերէնն ունի իւրայատուկ արտասանութիւն: Թէեւ այդ արտասանութիւնը գլխաւորապէս հետեւում է ֆրանսերէնի օրէնքներին, այն երբեմն ունի իր առանձնայատկութիւնները: Մենք հետեւեալ մօտեցումն ենք առաջարկում: Եթէ ֆրանսերէն խօսքի մէջ ֆրանսացին այդ բառը չի ընկալում որպէս օտար դարձուածք (հարցը, ինչ խօսք, նուրբ է), այն տառադարձում ենք ինչպէս ֆրանսերէն որեւէ բառ: Օրինակ՝ agenda աժենդա, quiproquo քիպրոքո, lapsus լապսիւս, et cetera ետ սետերա, vice versa վիս(է) վերսա, summum սո(մ)մում եւ նման բազմաթիւ բառերի մէջ անտեղի կը լինէր ներմուծել բուն լատիներէն արտասանութիւնը:

Սակայն լատիներէնի շունչը պահած արտայայտութիւնները, եւ նմանապէս նրանք, որ հայերէնում իրենց ձեւերն ունեն արդէն, ցանկալի է տառադարձել ուղղակի լատիներէնից: Օրինակ. veni vidi vici վենի վիդի վիկի (եւ ոչ թէ «...վիսի»)՝ ինչպէս ֆրանսացիներն են արտասանում), cogito ergo sum կոգիտո երգո սում (եւ ոչ թէ «կոժիտո...»), habemus papam հաբեմուս պապամ (եւ ոչ թէ «աբեմիւս...»), sui generis սուի գեներիս (եւ ոչ թէ «...ժեներիս»), նմանապէս՝ magister մագիստեր, consensus կոնսենսո(ւ)ս, incognito ինկոգնիտո, interim ինտերիմ, vae victis վա՛յ վիկտիս, panem et circenses պանեմ ետ կիրկենսես:

Մասնաւորապէս պէտք է ուշադիր լինել լատիներէն «Ս» տառի արտասանութեանը, որը լատիներէն հնչում է [ու] API [ս], իսկ ֆրանսերէն՝ [իւ] API [յ]: Օրինակ՝ «dura lex, sed lex» արտայայտութիւնը ֆրանսացին արտասանում է [դիրա...], սակայն լատիներէն պէտք է ասել [դուրա...]²⁹:

Ժե) Ինչպէս նշել ենք, ֆրանսերէնի [k] հնչիւնը համապատասխանում է հայերէն «կ» տառին: Սակայն հազուադէպ դէպքերում գործ ունենք «ք» հնչիւնի հետ: Դա յատկապէս լսելի է «qui, que, quoi» բառերի «q»ի արտաբերման պարագայում: Հաշուի առնելով այդ հանգամանքը, նաեւ այն, որ այդ բառերը լատիներէնի անմիջական շարունակութիւնն են, մենք գերադասում ենք դրանք տառադարձել «քի, քը, քու»:

français correct (Guide pratique), 5^e édition révisée et actualisée par Michèle Lenoble-Pinson, éd. De Boeck – Duculot, Paris Bruxelles, 1998, էջ 84-87):

²⁸ Խօսքը լատիներէնի տեսքը պահած բառերի մասին է, քանզի լատիներէնից սերած ֆրանսացած բառերը ֆրանսերէն լեզուի մեծամասնութիւնն են կազմում:

²⁹ Աւելի մանրամասն տե՛ս մեր յօդուածաշարքի Բ. մասը (հին յունարէն եւ լատիներէն լեզուներ):

Նոյնը առաջարկում ենք անել «qu» կապակցության [k] հնչյունի համար. roquefort ռոքֆոր (եւ ոչ՝ ռոկֆոր), Montesquieu Մոնտեսքիո, Quimper Քեմպեր, Aquitaine Աքուիտանիա, Québec Քեբեկ³⁰, Raymond Queneau Ռեմոն Քնո, Michel Quint Քեն:

Ժզ) Ֆրանսերենում գործածելի հին յունարեն բառերի հնչյունները նոյնպես ցանկալի է մտեցնել հին յունարենի տառադարձությանը (եթէ այդ անունները հային ծանօթ են հենց յունարենից). chrysanthème քրիսանթեմ (եւ ոչ «կրիզանտեմ»), cyclope կիկլոպ, gymnastique գիմնաստիկ, hexagone հեքսագոն, labyrinthe լաբիրինթ, marathon մարաթոն, sphinx սփինքս, théâtre թեատր, thalassothérapie թալասոթերապի: Այդպիսի դեպքերում տառադարձումը հետեւեալն է. «ph / փ», «th / թ», «ch / ք», «ps / փս», «x / քս»³¹:

Ժէ) «X» երկհնչյունը աւանդաբար ընդունուած է գրել «քս», լինի այն մաքուր ֆրանսական, թէ լատինական կամ յունական. Aix-en-Provence Եքս-ան-Պրովանս, Dax Դաքս, Max Gallo Մաքս Գալո, Astérix Աստերիքս: Սակայն «x» տառի հայերէն [x] (API [s]) արտասանութեան դէպքում այն այդպէս էլ տառադարձում ենք. Auxerre Ոսեր, Bruxelles Բրուսել (գերադասում ենք ա՛յս ձեւը, քան թէ Բրիւսել)³²:

Ժը) Այլ օտար լեզուներից ֆրանսերէն մտած բառերի հնչյունները նախընտրելի է գրել փոխատու լեզուի օրինակով: Խօսքը նախ եւ առաջ անգլերէն ոց API [ŋ] հնչյուն ունեցող բառերի մասին է, որպիսիք վերջին ժամանակներս մեծապէս տարածուել են ֆրանսերէնում: Այդ հնչյունը աւանդաբար տառադարձում ենք «նգ». camping կամպինգ, bowling բո(ւ)լինգ, casting քաստինգ, marketing մարկետինգ, parking պարկինգ, pressing պրեսինգ, happening հափնինգ³³: Օտար ծագման (գերմաներէն, սլաւներէն) ch API [x] հնչյունը նախընտրելի է հայերէն գրել «խ». Jacques Offenbach Ոֆ(ե)նբախ:

Ժթ) Խորհուրդ ենք տալիս լատիներէն «h» տառով սկսող ֆրանսերէն բոլոր բառերը (ինչպիսի երանգ էլ տառը ունենայ ֆրանսերէնում՝ «շնչեղ h» «h aspiré», թէ «համր h» «h muet»), հայերէնում անխտիր գրել «h»ով: Նախ՝ դա վերականգնում է ստուգաբանութիւնը (լատիներէն, յունարէն

³⁰ «Քեբեկ»ը ճիշտ չէ «Քուեբեկ» գրելը, քանզի ֆրանսերէնը ճիշտ է վերարտադրում հնդկացիական ալգոնկին լեզուի հնչումը: Անգլերէնից է գալիս սխալ արտասանութիւնը, որը ռուսերէնի միջնորդութեամբ անցել է խորհրդային շրջանի՝ Հայաստանում հաստատուած արեւելահայերէնին («Քվեբեկ»):

³¹ Աւելի մանրամասն տե՛ս մեր յօդուածաշարքի Բ. մասը:

³² Ֆրանսացիներն իրենք երբեմն սխալ են արտասանում այդպիսի անունները՝ [oksɛʁ], [bʁyksɛl], սակայն դա մեր՝ հայերիս հոգը չէ:

³³ Անգլերէնի մասին կը խօսենք յաջորդ յօդուածում:

կամ այլ օտար լեզուով), երկրորդ՝ անլի ճկուն է դարձնում հայերէնի ուղղագրութիւնը: François Hollande Հոլանդ, Honoré de Balzac Հոնորէ, Henri Bergson Հանրի, Georges-Eugène Haussmann Հոսման, ինչպէս եւ ամանդաբար ունենք Victor Hugo Հիւգո:

ի) Ֆրանսերէնի, ինչպէս եւ որեւէ այլ օտար լեզուի կրկնակ բաղաձայնները հայերէն գերադասելի է արտայայտել մէկ բաղաձայնով, մանաւանդ որ ֆրանսերէնում էլ դրանք մէկ ձայնով են հնչում. Lille Լիլ, Allier Ալիէ, Coulommiers Կուլոմիէ, Essonne Եսոն, Pierre Պիեր³⁴, Corrèze Կորեզ, Nanterre Նանտեր, François Mitterrand Միտերան:

իա) Ֆրանսերէնի արտասանական շեշտը առանձին վերցրած բառերի մէջ մշտապէս վերջին վանկի վրայ է: Ֆրանսացիները վերջին վանկի վրայ են շեշտում նաեւ օտար լեզուներից փոխ առած անխտիր բոլոր բառերը: Միայն [ə] հնչիւնն է որ շեշտ չի կարող կրել: Այս մօտեցումը ճշտիւ համապատասխանում է հայերէնի ձայնաբանութեանը (սակաւաթիւ բացառութիւններով): Բոլոր դէպքերում, հայերէնում անխտիր բոլոր փոխառութիւններն ու օտար անունները անհրաժեշտ է արտասանել վերջաշեշտ: Սա օրէնք է ոչ միայն ֆրանսերէնի, այլեւ բոլոր լեզուների համար: Օրինակ՝ Patricia Kaas պէտք է շեշտել Պատրիսիա՝, եւ ոչ թէ Պատրիսիա:

իբ) Գետերի ափերին տեղակայուած քաղաքների համար հայերէնը արդէն կիրարկում է սեռական յօդով կապակցութիւնը. Neuilly-sur-Seine Սենի Նոյի, Châlons-sur-Marne Մարնի Շալոն, La Roche-sur-Yon Յոնի Լա Ռոշ: Այս տրամաբանութեանը հետեւելով, հնարատր ենք համարում աշխարհագրական անունների որոշ մասնիկների թարգմանութիւն, ինչպէս՝ Aix-en-Provence Եքս ի Պրովանս (փոխանակ Եքս-ան-Պրովանս): Հայերէնի «ի» նախդիրը արտայայտում է ֆրանսերէնի «en» նախդրի իմաստը՝ «մէջ», այսինքն՝ Պրովանսի (միջի) Եքս (քանզի կան եւ այլ Եքսեր): Նմանապէս. Bourg-en-Bresse Բուրգ ի Բրես³⁵, Le Puy-en-Velay Լը Պուի ի Վլէ: Սա բնականաբար լոկ առաջարկութիւն է. հարցը բաց է:

իգ) Իվերջոյ, պէտք է ուշադիր լինել՝ ֆրանսերէն անունների վերջին չաւելացնել ռուսերէնից խորհրդային շրջանի՝ Հայաստանում հաստատուած արեւելահայերէնին ժառանգութիւն մնացած իգական անունների «ա» վերջածանցը: Նախ՝ ֆրանսերէնը ինքն էլ է հրաժարուել լատիներէնից եկած իգական բոլոր «a» վերջաւորութիւններից, երկրորդ՝ ռուսերէնը այդ վերջաւորութիւնը անւելացնում է կամայականօրէն՝ անունները իր լեզ-

³⁴ Իմաստ չունի լատինական կրկնակ «rr»-ն հայերէն «ռ» գրել, ինչպէս երբեմն գրում է խորհրդային շրջանի Հայաստանում հաստատուած արեւելահայերէնը (Պիեռ)՝ անշուշտ ռուսերէնի ազդեցութեամբ: Պիեր ձեւը Պետրոսի տարատեսակն է:

³⁵ Չենք կարծում, որ այս անուան տառադարձութեան մէջ պէտք է հետեւենք իին ֆրանսերէնից մնացած [bʁɛk] արտասանութեանը:

ուի օրէնքներին յարմարեցնելու նպատակով, եւ երրորդ՝ հայերէնի համար անելի սովորական է անունը «ա»ով չաւարտելը. Սեն, Լուար, Գարոն, Սոն, Վիեն, Շարանտ, Մարն անելի «հայերէն» են հնչում, քան ռուսերէնից ընդօրինակած Սենա, Լուարա, Գարոնա... ձեւերը:

Որպէս եզրափակում, մենք սկզբունքային հետեւեալ մօտեցումները կ'առաջարկէինք ֆրանսերէնի տառադարձութեան համար:

ա) Նախ պէտք է ընդունենք, որ ֆրանսերէնի (ի թիւս այլ բազմաթիւ լեզուների) պարագայում չունենք հայկաբան տառադարձութեան հաստատուած աւանդական մի համակարգ, քանզի տառադարձումների հենց սկզբից եւեթ ունեցել ենք արեւմտահայ եւ արեւելահայ ճեղքուածքը, եւ երկու ճիւղերի վրայ էլ ազդել են օտար համակարգեր:

բ) Պատմական դէմքերի համար (արքաներ, իշխաններ...) գերադասելի են (եթէ կան) պատմական տառադարձումները, որոնք կարող են լինել լատիներէն կամ յունարէն:

գ) Ֆրանսերէնից ենք տառադարձում միայն բուն ֆրանսերէն անունները (հին եւ միջին ֆրանսերէնի դարաշրջանում), եւ անելի ու անելի յաճախ՝ ԺԵ.-ԺԶ. դարերից սկսած:

դ) Ֆրանսերէնից ենք տառադարձում աշխարհի բազմաթիւ երկրամասերում գտնուող եւ առաջին անգամ ֆրանսագիների յայտնաբերած ու գրանցած աշխարհագրական եւ այլ յատուկ անունները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Նախորդ յօդուածների ամփոփիչ մտքերի մեծ մասը հաւասարապէս վերաբերում է եւ ֆրանսերէնին (եւ այստեղ դրանք չենք կրկնում): Ֆրանսերէնը այսօր միջազգային երկու խոշոր լեզուներից մէկն է (միւսը անգլերէնն է), եւ դրա ճիշտ տառադարձումը խիստ կարեւոր է ժամանակակից կեանքում: Ֆրանսերէնից գրագէտ եւ միացեալ տառադարձութիւն մշակելու գործում հայերէնը պէտք է հրաժարուի ինչպէս կիլիկեան, այնպէս էլ սովետական տառադարձութիւններից:

Ֆրանսերէնը հայաստանցի հայի համար վերջին դարում չի եղել այնպիսի «հարազատ» օտար լեզու, ինչպիսին ռուսերէնն էր, եւ այդ պատճառով ֆրանսերէն անունները դեռեւս ինչ-որ տեղ խորթ են հայաստանցի հայի ականջին (դրանք նա անելի շատ ռուսերէն եւ ռուսակերպ արտասանութեամբ է ճանաչում, օրինակ՝ Ժերար Դեպարդիե): Այսօր անելի ու անելի են ամրապնդում հայ-ֆրանսական կապերը, եւ անհրաժեշտ է, որ շտապ համակարգուի ֆրանսերէնի տառադարձութիւնը, նախքան այն անելի կ'աղաաղուի մի կողմից՝ ռուսահնչուն աւանդոյթով, միւս կողմից՝ Ֆրանսիան ու ֆրանսականը նոր յայտնագործող հայաստանցի անփորձ «ֆրանսագէտների» ձեռքով:

Յօդուածն աւարտենք Ալեքսանդր Սարուխանի երգիծանկարներից մէկում բերուած խորիմաստ երկխօսութեամբ, որը լաւ արտայայտում է հայերիս այսօրուայ լեզուավիճակն ու լեզուական հոգեբանութիւնը: Էջին երկու երգիծանկար է: Առաջին նկարի մէջ, Տիկ. Ֆինճանճեանը՝ իր ծանօթուհուն. «Տիկ. Ֆինճանճեան – Խենթանա՛մ պիպի: Տեսնաս մէտէօ Լէօմէթողը իմ անունս Ֆէնժանժան ըսաւ: Ախ, ի՛նչ անուշ կ'արտասանեն սա Ֆրանսացիները մեր կոշտ լեզուն»: Երկրորդ նկարի մէջ, մի պարոն՝ Տիկ. Ֆինճանճեանին. «– Տիկին, միախու Լըմէթորը ըսաւ որ... [եւ Տիկ. Ֆինճանճեանի պարասխանը] – Լըմէթօ չէ, Լէօմէ'թօ, Լէօմէ'թօ: Ե՛րբ պիպի սորվիք ճիշդ հնչումով արտասանել Ֆրանսական անունները: Կոշտ ենք, լմնցաւ...»³⁶:

³⁶ Ալեքսանդր Սարուխան, *Մենք՝ մեր ակնոցով* (մեր բարբերէն 200 ծաղրանկարներով), Գահիրէ, Սահակ-Մեսրոպ տպ., 1962, էջ 93:

THE PRINCIPLES OF TRANSLITERATING FOREIGN PROPER NAMES INTO ARMENIAN

PART III – FRENCH LANGUAGE

(Summary)

ARMEN MICHAELIAN (armen_michaelian@yahoo.com)

This article is one of a series that deals with the transliteration of foreign proper names into Armenian (the way to transcribe foreign names in Armenian characters). The first part of the series was devoted to the Middle Eastern languages (Arabic, Persian, Turkish and Azerbaijani); see Armen Michaelian, «The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part I – Middle Eastern Languages» [in Armenian], *Haigazian Armenological Review*, vol. 40, Haigazian University Press, Beirut 2020, pp. 341-364. The second part of the series deals with two classical languages, ancient Greek and Latin; see Armen Michaelian, «The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part II – Classical Languages (Ancient Greek and Latin)» [in Armenian], *Bazmavep*, year CLXXVIII, Venice 2020, 304-336.

The present, third part of the series is devoted to the transliteration of names of French origin. The principle of transliteration is based (as in the whole series) on classical Armenian spelling, definitely ruling out the “Cilician” transliteration on one side and the “Soviet” one on the other. Unlike that of ancient Greek and Latin, the transliteration of French proper names is not stabilized in Armenian due, on the one hand, to the influence of the Western pronunciation of Armenian dialects, and, on the other hand, to the influence of the Russian language on Eastern Armenian.

After a reminder of the phonological and orthographic principles of Armenian transliteration mentioned in the first articles of the series, the author scrutinizes the most problematic French sounds and phonemes and confirms or proposes (based on numerous examples) a coherent and principled transliteration for each of them. It is especially underlined that French transliteration is of capital importance, given that French provides not only proper names coming from France, Belgium, Switzerland or Quebec but also those coming from all over the world where the French were the first to transcribe many vernacular languages to which Armenian language cannot immediately have access.

The series of articles will continue with other important languages such as English, German, Italian, Spanish, Russian, Hindi, Chinese, Japanese, etc.